ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
Հասարակական գիտություններ № 8, 1959 Общественные науки

Ա. Գ. Դավթյան

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՐՏԵԼԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ ԵՎ ՆՐԱ ԿԵՆՍԱԳՈՐԾՄԱՆ ԱՌԱՋԻՆ ՔԱՅԼԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Գյուղատնտեսական արտելի առաջին օրինակելի կանոնադրությունը մըշակվեց 1930 թվականին, կոլտնտեսային շինարարության սկզբնական շրջանում, երբ մասսայական կոլեկտիվ շարժումը դեռևս նոր էր սկսել ծավալվել։ Այդ կանոնադրությունն ամենից առաջ ընդգծում էր գյուղացիների համար արտել մտնելու կամավորության սկզբունքը և տալիս էր արտելի նպատակների ու խնդիրների պարզ ձևակերպումը։ Կանոնադրության մեջ համառոտ կերպով նշվում էին նաև արտելի հանրային տնտեսությունը կազմակերպելու կանոնները, նրա գործերը կառավարելու դեմոկրատական կարգը և հիմնական ցուցումներ՝ կոլտնտեսականների անձնական օժանդակ տնտեսության մասին։

1930 թ. կանոնադրությունը կարևոր դեր խաղաց մասսայական կոլտնտեսային շարժումը ամրապնդելու և զարգացնելու, համատարած կոլեկտիվացումը գյուղում իրականացնելու գործում։

Գյուղատնտեսական արտելի առաջին օրինակելի կանոնադրության կարևորագույն արժանիքներից մեկն էլ այն էր, որ նա կազմակերպչորեն ձևավորեց և ամրապնդեց գյուղատնտեսական արտելը որպես կոլտնտեսային շարժման հիմնական ձև։

Հայաստանում մասսայական կոլտնտեսային շարժման ծավալման հենց սկզբնական շրջանից սկսած կոլեկտիվ տնտեսությունները իրենց ճնշող մեծամասնությամբ հանդես եկան արտելային ձևով։ Այսպես. 1930 թ. հունիսի 1-ի տվյալներով Հայաստանի բոլոր կոլտնտեսությունների ընդհանուր թվի մեջ կոմունաները կազմում էին 1,23%, համատեղ հողօգտագործման ընկերությունները՝ 17,7 տոկոս, իսկ գյուղատնտեսական արտելները՝ 80,98 տոկոս[1]։ Այս տենդենցը շարունակվեց նաև կոլտնտեսային շինարարության հետագա տարիներին, երբ ոչ միայն նորաստեղծ կոլտնտեսություններն էին կազմավորվում արտելային ձևով, այլև գոյություն ունեցող կոմունաներն ու համատեղ հողօգտագործման ընկերություններն ընդունելով արտելի կանոնադրությունը՝ վերափոխվում էին գյուղատնտեսական արտելների։ Այդ բանի շնորհիվ 1933 թ. հունիսի 1-ին կոմունաների տոկոսը կոլտնտեսություններում իջել էր մինչև 0,4-ի, համատեղ հողօգտագործման ընկերություններինը՝ 4,0-ի, իսկ գյուղատնտեսական արտելների տոկոսը՝ ընդհակառակը, բարձրացել և հասել էր 95,6-ի[2]։ Դրանից մեկ տարի հետո՝ 1934 թ. հունիսի 1-ին կոմունաները նույն չնչին տոկոսն էին կազմում, համատեղ հողօգտագործման ընկերությունները բոլորն անցել էին արտելի կանոնադրության, իսկ գյուղատնտեսական արտելները դարձել էին կոլխոզշարժման միակ ձևը (99,6 տոկոս)[3]։

[1] *Հաշվումները կատարված են մեր կողմից՝ համաձայն Վրաց. ՍՍՌ ՊԿԱ, ֆ. 661, 1930, գ. 25. թ. 20-ի տվյալների (Ա. Դ.)*

[2] „Сельское хозяйство СССР", ежегодник, 1935, М., 1936, стр. 638.

[3] *ՄԼԻ-ի Վրաց. ֆիլիալի արխիվ, ֆ. 13, գ. 4758. թ. 173։*

Այստեղից պարզ է դառնում, որ կոլտնտեսային կարգերի հետագա ամրապնդումը ռեսպուբլիկայում նշանակում էր գյուղատնտեսական արտելների հետագա կազմակերպական-տնտեսական ամրապնդում ու աճ:

Սակայն պետք է նշել, որ կոլտնտեսությունների հետագա ամրապնդմանը խանգարում էին գյուղատնտեսական արտելի առաջին կանոնադրության նեղ շրջանակները: Հաղթանակած կոլտնտեսային կարգերը, առաջավոր կոլտնտեսությունների փորձը օրակարգի էին դրել կազմակերպական ու տնտեսական նոր հարցեր (բրիգադների կազմակերպումը, կոլտնտեսային հողօգտագործման կարգը, կոլտնտեսականների տնամերձ հողամասերի և նրանց անձնական սեփականությունը կազմող անասունների քանակի նորմավորումը և այլն), որոնց այն ժամանակ գործող կանոնադրությունը պատասխան չէր տալիս: 1935 թ. սկզբներին արդեն նոր կանոնադրության մշակումը ոչ միայն անհրաժեշտ, այլև կոլտնտեսային շինարարության ընդգավառում կուտակված հսկայական փորձի շնորհիվ, պրակտիկորեն հնարավոր էր դարձել:

Կանոնադրություն մշակելու նպատակով պարտիայի Կենտրոնական Կոմիտեն և Սովետական կառավարությունը որոշեցին 1935 թ. փետրվարին Մոսկվայում հրավիրել հարվածային կոլտնտեսականների Համամիութենական 2-րդ համագումար:

Համագումարի նախապատրաստումը Հայաստանում վերածվեց հսկայական մասսայական-քաղաքական կամպանիայի: Կոլտնտեսականների ու կոլտնտեսությունների միջև, համագումարին իրենց պատգամավորներն ուղարկելու համար, լայն սոցմրցություն ծավալվեց: Պատգամավորներն ընտրվում էին կոլտնտեսությունների ընդհանուր ժողովներում՝ գերազանցապես նրանք, որոնք կոլտնտեսային արտադրության մեջ անմիջականորեն աշխատող հարվածային կոլտնտեսականներ էին:

Իրենց ժողովներում կոլտնտեսականները քննարկում էին կոլտնտեսային շինարարության ու արտադրության ամենաբազմազան հարցերը և, ելնելով իրենց պրակտիկ հարուստ փորձից, բացահայտում էին 1930 թ. կանոնադրության թերությունները, բազմաթիվ առաջարկություններ էին անում նրա փոփոխման ու լրացման վերաբերյալ:

Ընտրությունների այս կարգը, որի համաձայն պատգամավորներն առաջադրվում էին կոլտնտեսային ժողովների կողմից՝ ապահովեց կոլտնտեսային կյանքի և արտադրության կազմակերպման մեծ փորձ ունեցող կոլտնտեսականների մասնակցությունը համագումարին: Օրինակ, Թալինի շրջանից պատգամավոր ընտրվեց Ագիամանի կոլվարչության անդամ, ավագ հովիվ Սրապիոն Գրիգորյանը, որը կոլտնտեսության հիմնադիրներից մեկն էր, ծագումով չքավոր գյուղացի և 1929—1930 թվականներին գյուղխորհրդի նախագահի պարտականությունն էր կատարել:

Փետրվարի 1-ին Ղամարլուի շրջանի Թոխանշալու գյուղի «Կարմիր հոկտեմբեր» կոլտնտեսության ընդհանուր ժողովը համագումարի դելեգատ ընտրեց չորս տարվա բրիգադավար, անպարտիական կոլտնտեսական Հովհաննես Շահրադյանին: Նրա բրիգադը 1934 թ. պետությանը բամբակ հանձնելու պլանը կատարել էր 245%-ով, խաղողի բերքատվության բարձրացման պլանը՝ 200%-ով և այլն: Ժողովում Հ. Շահրադյանի բրիգադը խոստացավ 1935 թ. հեկտարից ստանալ 20 ցենտներ բամբակ և առաջիկա օրերին դաշտ փոխադրել 500 սայլ պարարտանյութ: Նույն շրջանի «Նոր կյանք»-ի կոլտնտեսա-

կանների դելեգատն էր կոլտնտեսության անդամ, այգեգործական բրիգադի բրիգադավար Աննման Խաչատրյանը և այլն։

Հայաստանից համագումարի դելեգատներ ընտրվեցին ընդամենը 12 հոգի։

Համագումարը բացվեց 1935 թ. փետրվարի 11-ին։ ՍՍՌՄ 56 ազգություններ իրենց ներկայացուցիչներն էին ուղարկել համագումար, որի աշխատանքներին մասնակցում էին 1473 դելեգատներ[4]։ Օրակարգում դրված էր միայն մեկ հարց՝ գյուղատնտեսական արտելի նոր օրինակելի կանոնադրության ընդունումը։ Հարցը քննարկվում էր մեծ ուշադրությամբ ու գործարար ձևով։ Մաքերի փոխանակությանը մասնակցեցին 80 դելեգատներ։ Նրանք մանրակրկիտ կերպով վերլուծում էին նախորդ մշակված կանոնադրության նախագծի ամեն մի կետը և մացնում էին իրենց ուղղումները, փոփոխությունները, առաջարկներն ու լրացումները։

Համագումարի փետրվարի 14-ի երեկոյան նիստում ճառով հանդես եկավ նաև Հայկ. ՍՍՌ Վադարշապատի շրջանի «Կոմունիզմի ընտանիք» կոլտնտեսության բամբակագործական բրիգադի բրիգադավար Երվանդ Ղարիբյանը։ Հայաստանի կոլտնտեսականների անունից նա ողջունեց հարվածային կոլտնտեսականների Համամիութենական 2-րդ համագումարը, ապա նշեց այն հսկայական դրական դերը, որ խաղացին պարտիայի ստեղծած ՄՏԿ-ների քաղաքաժինները՝ Հայաստանում կոլտնտեսությունները կուլակային տարրերից մաքրելու և կազմակերպչորեն ու տնտեսապես ամրապնդելու, կոլտնտեսականներին ունևորության ճանապարհը դուրս բերելու գործում։

Որպես այդ բանի ապացույց Ե. Ղարիբյանը բերեց իրենց և հարևան կոլտնտեսությունների օրինակը, որտեղ կոլտնտեսականների եկամուտները զգալիորեն ավելացել էին։ Այսպես. եթե 1933 թ. «Կոմունիզմի ընտանիք»-ում կոլտնտեսականներն աշխատանքի համար ստացել էին 2,4 կգ ցորեն, 52 կոպ. դրամ, ապա 1934 թ. արդեն յուրաքանչյուր աշխատանքի համար նրանք ստացան 6 կգ ցորեն 3 ռ. 14 կոպ. դրամ։ «Աղավնատուն» կոլտնտեսությունում 1934 թ. կոլտնտեսականներն աշխատանքի համար ստացան 16 ռ. դրամ, 8 կգ ցորեն և բազմաթիվ այլ մթերքներ։

Ելույթ ունեցողն այնուհետև նշեց, որ անցյալի հետամնաց, խավարի մեջ խարխափող հայկական գյուղն արմատապես փոխել է իր դեմքը. կոլտնտեսականների տներում կահավորանքը բոլորովին այլ է դարձել։ Փոխվել է նաև ինքը՝ կոլտնտեսականը թե՛ իր արտաքինով և թե՛ իր հայացքներով։

Անցնելով կոլտնտեսային շինարարության հարցերին Ե. Ղարիբյանը նշեց, որ նախկին կանոնադրությունն այլևս չէր համապատասխանում կոլտնտեսային կյանքի ու արտադրության աճող պահանջներին, որ «հին կանոնադրությունը վերջին ժամանակներս կյանքից հետ է մնացել, քանի որ մի ամբողջ շարք մոմենտներ չկային այդ կանոնադրության մեջ»[5]։ Ե. Ղարիբյանը մի շարք դիտողություններ և կոնկրետ առաջարկություններ արեց նոր կանոնադրության վերաբերյալ։ Նա գտնում էր, որ կոլտնտեսականների տնամերձ հողամասերի չափերը սահմանելիս, բացի այն տարբերությունից, որ

[4] „Правда", 16 февраля, 1935.

[5] „Второй Всесоюзный съезд колхозников-ударников", стенографич. отчёт, ОГИЗ, Сельхозгиз, 1935, стр. 136.

դրվում է բամբակագործական, այգեգործական, հացահատիկային և այլ շրջանների միջև, պետք է տարբերություն դրվի նաև միևնույն շրջանի ջրովի և անջրդի հողամասերի միջև. անջրդի վայրերում պետք է լինի տնամերձի ավելի բարձր նորմա, քան ջրովի հողամասերում: Նա առաջարկում է հանրայնացնել դեռևս չհանրայնացված ձիերը: Այնուհետև, ուր բնական պայմաններից ելնելով դժվարություն է ստեղծվում մանր եղջերավոր անասունների և խոզերի աճեցման գործում, Զարիբյանը առաջարկում է թույլատրվի դրանց փոխարեն պահելու երկու կով: Կոլտնտեսություններում անասունների անկում լինելու դեպքում անհրաժեշտ է նորերը գնել ոչ թե անրաժանելի ֆոնդից, այլ նոր հատկացումներ կատարել այդ նպատակի համար և այլն:

Ե. Զարիբյանն առանձնապես հավանություն է տալիս կանոնադրության այն կետին, որով սահմանափակվում է կոլտնտեսականներին աշխատերով տուդանելը: Իր ելույթի վերջում Ե. Զարիբյանը նշեց այն հակայական դերը, որ կխաղա նոր կանոնադրությունը կոլտնտեսություններն ամրապնդելու և «կոլտնտեսական մասսաներին դեպի անդասակարգ սոցիալիստական հասարակարգ առաջնորդելու գործում»[6]:

Կանոնադրության նախագիծն ավելի մանրակրկիտ կերպով մշակելու նպատակով, նույն օրը համագումարը առանձնացրեց 167 մարդուց բաղկացած հատուկ հանձնաժողով: Նրա կազմում ընտրվեցին Ի. Վ. Ստալինը, Կ. Ե. Վորոշիլովը, Մ. Ի. Կալինինը, Ա. Ի. Միկոյանը և պարտիայի ու կառավարության այլ դեկավարներ: Հանձնաժողովի կազմում Հայաստանից ընտրվեց Միսիանի շրջանի «Ինտերնացիոնալ» կոլտնտեսության նախագահ Ավագ Դանիելյանը:

Հանձնաժողովը մեկ անգամ ևս մանրամասն կերպով նայեց կանոնադրության բոլոր կետերը և քննարկեց դելեգատների արած բոլոր առաջարկությունները: Հանձնաժողովի աշխատանքն ընթանում էր բացառիկ գործարար մթնոլորտում: Նրա աշխատանքի մասին Ա. Դանիելյանը հետագայում գրում էր, որ ամեն մի հարց «կարծիքների ամենատաք փոխանակություն էր առաջացնում: Ոչ մի ծափահարություն, իհարկե, չկար: Ելույթները բոլորը կարճ էին ու գործարար... Կանոնադրության բաժինների քննարկումը ոչ պակաս եռուն էր, քան մտքերի փոխանակությունը հենց համագումարի նիստերում»[7]:

Հարվածային կոլտնտեսականների Համամիութենական 2-րդ համագումարը միաձայն ընդունեց գյուղատնտեսական արտելի կանոնադրությունը: Նույն օրը՝ փետրվարի 17-ին կանոնադրությունը հաստատվեց ՍՍՀՄ ժողկոմսովետի և Համկ(բ)Պ Կենտկոմի կողմից և օրենքի ուժ ստացավ:

Սակայն համագումարի ընդունած կանոնադրությունը միայն օրինակելի կանոնադրություն էր: Նրա սահմանած մի շարք դրույթներ ու նորմաներ տեղական պայմաններին համեմատ կարիք ունեին հետագա ճշգրտման ու կոնկրետացման: Այդ պատճառով համագումարը որոշեց.

«Առաջարկել բոլոր գյուղատնտեսական արտելներին, երեք ամսվա ժամանակամիջոցում, «Գյուղատնտեսական արտելի օրինակելի կանոնադրության» հիման վրա.—

[6] „Второй Всесоюзный съезд колхозников-ударников", стр. 137.
[7] Газ. „Коммунист", 28 февраля, 1935, № 49.

ա) մշակել իրենց արտելի կանոնադրությունը.

բ) այն քննարկել և հաստատել արտելի անդամների ընդհանուր ժողովում՝ անդամների ոչ պակաս 2/3-ի մասնակցությամբ.

գ) արտելի կանոնադրությունը գրանցել խորհուրդների շրջանային գործադիր կոմիտեում»։

Համագումարն ավարտվելուց անմիջապես հետո Հայաստանի Կոմպարտիան գյուղատնտեսական արտելի օրինակելի կանոնադրության և համագումարի նյութերի լայն պրոպագանդ կազմակերպեց։

1935 թ. փետրվարի 24-ին ՀԿ(բ)Պ Կենտկոմը պարտիայի շրջկոմների քարտուղարների ռեսպուբլիկական խորհրդակցություն հրավիրեց՝ նվիրված գյուղատնտեսական արտելի կանոնադրության մասսայականացման և առանձին արտելների կանոնադրությունների ընդունումը նախապատրաստելու հարցերին։ Խորհրդակցությունն ընդունեց բանաձև՝ «Հարվածային կոլտնտեսականների Համամիութենական 2-րդ համագումարի արդյունքներն ուսումնասիրելու և գյուղատնտեսական արտելի նոր կանոնադրությունը կոլտնտեսականների կողմից ընդունելու մասին»։

ՀԿ(բ)Պ շրջկոմներին օգնելու նպատակով Կենտկոմը ռեսպուբլիկայի ղեկավար աշխատողներից 27 հոգու ուղարկեց շրջանները։ Նույն կերպ վարվեցին շրջանային կազմակերպությունները՝ շրջանի պարտիական-սովետական ակտիվից բազմաթիվ մարդկանց ուղարկելով գյուղական կազմակերպություններին օգնելու։ Թարգմանվեցին և հայերեն, քրդերեն ու ադրբեջաներեն բազմահազար տպաքանակով հրատարակվեցին օրինակելի կանոնադրությունը, համագումարի նյութերը կանոնադրության ներդիրով և կանոնադրության ձևերը[10]։

1935 թ. գարնանը ամբողջ Հայաստանում կոլտնտեսականների քաղաքական բարձր ակտիվության պայմաններում կոլտնտեսային ակտիվի շրջանային հավաքներ ու խորհրդակցություններ անցկացվեցին՝ նվիրված նոր կանոնադրությանն անցնելու և գարնանացանը կազմակերպելու հարցերին։ Գյուղերում ամենուրեք անցկացվեցին կոլտնտեսականների ու մենատնտեսների ժողովներ, ուր նրանք քննարկեցին գյուղատնտեսական արտելի կանոնադրությունը և յուրաքանչյուր արտել ընդունեց իր կանոնադրությունը։ Այնուհետև այդ կանոնադրությունները հաստատվեցին շրջանային Սովետների Գործկոմների կողմից։

Մի շարք շրջաններում և առանձին կոլտնտեսություններում կանոնադրությունն ընդունելու ուղղությամբ նախապատրաստական մեծ աշխատանքներ էին տարվել։ Օրինակ՝ Ղամարլուի շրջանում կանոնադրության քննարկումն ու ընդունումն ընթացել էր հետևյալ կերպ. նախ ձեռք էր բերվել և գյուղերին բաժանվել 12200 օրինակ կանոնադրություն, ինչպես նաև կոլտնտեսությունների ներքին կանոնադրության ձևեր[11], ապա մարտի 1-ին հրավիրվել էր գյուղական պարտկազմակերպությունների և կոլտնտվարչության նախագահների խորհրդակցություններ՝ նվիրված կանոնադրության քննարկմանն ու նրա մասսայականացմանը։ Գյուղական կազմակերպություններին

[8] «Խորհրդային Հայաստան», № 41, 18 փետրվարի, 1935։

[9] Տե՛ս նույն տեղում, 1935, փետրվարի 28, № 49։

[10] Մլի-ի Հայկ. ֆիլիալի արխիվ, ֆ. 1, ցուց. 23, 1935, գ. 249, կապ. 24, թ. 78։

[11] Տե՛ս նույն տեղում, թ. 110։

օգնելու նպատակով կոլտնտեսություններն էին գործուղվել շրջանային պարտիական և սովետական 40 դեկավար աշխատողներ, որոնց օգնությամբ ու դեկավարությամբ բրիգադներում, գյուղական ակումբներում, կարմիր անկյուններում, մենատնտեսների տասնյակներում անց էին կացվել կանոնադրության բարձրաձայն ընթերցումներ. կոլտնտեսականների հարցերին պատասխանելու համար սահմանվել էր հերթապահություն, իսկ մարտի 7—12-ը շրջանի բոլոր գյուղերում մենատնտեսների ակտիվ մասնակցությամբ անց էին կացվել ժողովներ և այլն։ Այս միջոցառումների ժամանակ կոլտնտեսականների արած առաջարկությունները դարձան տվյալ արտելի կանոնադրության նախագծի հիմքը։ Նախքան ընդհանուր ժողովների սկսվելը, մարտի 18-ին պարտշրջկոմի նախաձեռնությամբ ռադիո-կանչ էր կազմակերպվել նվիրված կանոնադրության մասսայականացմանը և այդ ընթացքում ծավալված սոցմրցության արդյունքների ամփոփմանը։ Այնուհետև տեղի ունեցան կոլտնտեսային ընդհանուր ժողովները։ Կանոնադրության քննարկման կամպանիայի և նրա ընթացքում կոլտնտեսականների արտադրական վերելքը լայնորեն լուսաբանվել էր մամուլում։

Այս քրտնաջան կազմակերպական աշխատանքի շնորհիվ ապահովվեց կոլտնտեսականների լայն մասնակցությունը ժողովներին, որտեղ ընդունվելու էին իրենց արտելների կանոնադրությունները։ Այսպես. Դետաշենում կոլտնտեսության 240 անդամներից ժողովին մասնակցել էին 226 հոգի (94,2 տոկոս), որից 102-ը կոլտնտեսուհիներ էին։ Իմանշալուում 297 կոլտնտեսականներից ընդհանուր ժողովին մասնակցել էին 262 հոգի, Մեհրարլուում ժողովին մասնակցել էին բոլոր կոլտնտեսականների 94 տոկոսը[12] և այլն։

Օրինակելի կանոնադրության քննարկման և առանձին արտելների կանոնադրությունների ընդունման աշխատանքները նույնպիսի հաջողությամբ էին ընթանում նաև ռեսպուբլիկայի մյուս շրջանների կոլտնտեսություններում։ Օրինակ՝ Վաղարշապատի շրջանում նախօրոք հավաքվում էին կոլտնտեսականների առաջարկները, հրապարակվում էին բրիգադներում, պատի թերթերում՝ յուրաքանչյուր դեպքում նշելով տվյալ առաջարկի հեղինակի ազգանուն անունը։ Այս հավաքված առաջարկները քննարկվում էին բրիգադներում, մենատնտեսների թաղամասերում, պարտիական-կոմերիտական ժողովներում, որից հետո ներկայացվում էին կոլտնտեսային ընդհանուր ժողովների քննարկմանը, որտեղ վերջնականապես որոշվում էր թե կոլտնտեսականների ո՛ր առաջարկը մտցնել կանոնադրության մեջ և որը՝ կոլտնտեսությունների ընթացիկ աշխատանքների ծրագրի մեջ[13]։ Միայն «Անասուծած»-ի կոլտնտեսականները արել էին 51 այդպիսի առաջարկներ, Ի. Վ. Ստալինի անվան կոլտնտեսությունում արվել էր 13 առաջարկ և այլն։ Անդրկովկասյան Հողժողկոմատի ներկայացուցիչը, որն ուղեկցել էր արտելի կանոնադրության ընդունման և կենսագործման ընթացքը Վաղարշապատի շրջանում, կոլտնտեսականների ակտիվության մասին գրել է. «Կանոնադրության ընդունումը կոլտնտեսություններում մեծ խանդավառությամբ և կոլտնտեսականների ու կոլտնտեսուհիների ակտիվ մասնակցությամբ էր ընթանում։ Առանձին կոլտնտեսա-

[12] ՄԼԻ-ի Հայկ. ֆիլիալի արխիվ. ֆ. 1, 1935, գ. 249, կապ. 24, թ. 109—110, գ. 233, կապ. 25, թ.թ. 62—63։

[13] Նույն տեղում, ֆ. 1, գ. 249, կապ. 24, թ. 80։

կանոնների հետ ունեցած իմ զրույցը ցույց տվեց, որ կոլտնտեսականները նոր կանոնադրության ընդգրկած բոլոր հարցերին տեղյակ են»[14]։

Նույնպիսի կազմակերպական աշխատանքի շնորհիվ ներքին Թալինում կանոնադրության ընդունմանը նվիրված ժողովում քվեարկությանը մասնակցել էին կոլտնտեսության չափահաս անդամների 91 տոկոսը[15], Նոր-Բայազետի շրջանի Ղշլաղ գյուղում ժողովին մասնակցել էին ադամարդ կոլտնտեսականների 90 տոկոսը, 139 կոլտնտեսուհի և 31 մենատնտես[16]։

Թե ինչպիսի աշխատանքային և քաղաքական բարձր ակտիվություն էին ցուցաբերում կոլտնտեսականներն ու մենատնտեսները արտելի կանոնադրության քննարկման և ընդունման կամպանիայի ընթացքում, ցույց են տալիս նաև հետևյալ փաստերը. Ղամարլուի շրջանի Ներքին Դվին գյուղում կանոնադրության քննարկման ժամանակ ժողովում ելույթ էին ունեցել 20 կոլտնտեսականներ ու մենատնտեսներ։ Այդ նույն ժողովում դիմել և կոլտնտեսություն էին ընդունվել 10 մենատնտեսներ[17]։ Ժողովից հետո կոլտնտեսականները մեծ խանդավառությամբ սկսել էին ծառատնկման կամպանիա, առուների, ճանապարհների, կամուրջների վերանորոգում, դաշտ էին տեղափոխել 700 սալ դոմադը և այլն[18]։ ՀԿ(բ)Պ Կիրովականի շրջկոմի կազմակերպած մենատնտեսների հավաքում ելույթ էին ունեցել 25 հոգի, որոնք բոլորն էլ իրենց ճառերը վերջացրել էին Համզաչիմանի պատգամավոր մենատնտես Երեմ Ասլանյանի խոսքերով՝ «Մենատնտես եկա, վերադառնում եմ կոլխոզնիկ»[19]։

Ամբողջ Հայաստանում 1935 թ. առաջին կիսամյակի ընթացքում կոլտնտեսություն էին մտել ավելի քան 23 հազար աշխատավոր գյուղացիական տնտեսություններ[20]։

Կոլտնտեսականներն իրենց ընդհանուր ժողովներում, ելնելով իրենց փորձից և կոլտնտեսության զարգացման կոնկրետ պայմաններից, բազմաթիվ առաջարկություններ էին մտցնում կանոնադրության մեջ։ Օրինակ՝ Վաղարշապատի շրջանի Ներքին Խաթունարխ գյուղի կոլտնտեսականներն իրենց ժողովում առաջարկել էին խառն անասնապահական ֆերմա ստեղծել, «Անաստված»-ի կոլտնտեսականները՝ խրճիթ-լաբորատորիա, յուրաքանչյուր բրիգադի համար տեսակավոր սերմացու ստանալու հողամաս առանձնացնել և այլն։ Թալինի շրջանի Մեհրիբանի կոլտնտեսականներն առաջարկել էին մեղվաբուծական ֆերմա ստեղծել։ Հոկտեմբերյանի շրջանի Բամբակաշատի կոլտնտեսականներն առաջարկել էին գյուղում ծննդարերական տուն կառուցել և այլն[21]։

Տեղերում օրինակելի կանոնադրության մասսայականացման գործում դգալի դեր կատարեցին նաև հարվածային կոլտնտեսականների Համամիութենական 2-րդ համագումարի դելեգատները, որոնք եղան բազմաթիվ գյուղերում, կոլտնտեսականների մոտ, հանդես եկան մամուլում, պատմեցին համագումարի աշխատանքների մասին, մեկնաբանեցին կանոնադրության

---

14 ՄԼԻ-ի Վրաց. ֆիլիալի արխիվ, ֆ. 13, գ. 4763, թ. 41։
15 ՀՍՍՌ ՊԿԱ, ֆ. 113, 1935, գ. 2883, 2.
16 ՄԼԻ-ի Հայկ. ֆիլիալի արխիվ, ֆ. 1, գ. 253, կապ. 23, թ. 18։
17 «Խորհրդային Հայաստան», 1935, մարտի 3, № 51։
18 Տե՛ս նույն տեղում։
19 Նույն տեղում, 1935, մարտի 4, № 52։
20 Վրաց. ՍՍՌ ՊԿԱ, ֆ. 660, 1936, գ. 9125, թ. 2։
21 ՄԼԻ-ի Հայկ. ֆիլիալի արխիվ, ֆ. 1, 1935, գ. 249, կապ. 24, թ.թ. 81, 82։

յուրաքանչյուր կետը։ Ինչպես նշում էին նրանք ՀԿ(բ)Պ Կենտկոմում հրավիրված իրենց խորհրդակցության ժամանակ՝ ամենուրեք օրինակելի կանոնադրությունը կոլտնտեսականների կողմից «մեծ գոհունակությամբ» և «ծափահարությամբ էր ընդունվում», որովհետև, ինչպես ասում էր դելեգատ Ե. Ղարիբյանը՝ «Սարդիկ պարզ տեսնում էին, որ համագումարը մի նոր բան ավելացնում է»[1]։

ՀԿ(բ)Պ Կենտկոմը մի քանի անգամ անդրադարձավ և հատուկ որոշումներ ընդունեց գյուղատնտեսական արտելի օրինակելի կանոնադրության քննարկման, նրա մասսայականացման և առանձին արտելների ներքին կանոնադրությունների ընդունման հարցերի մասին[2]։ Ելնելով օրինակելի կանոնադրության պահանջներից, Կենտկոմն իր որոշումներում կոնկրետ ցուցումներ տվեց արտելների կանոնադրությունները քննարկելու և ընդունելու, կոլտնտեսականներին տնամերձ հողամասեր հատկացնելու և նրանց անձնական օգտագործման տակ գտնվող անասունների գլխաքանակը սահմանելու կարգի և արտելի կանոնադրության կենսագործման հետ կապված մյուս հարցերի մասին։

Կենտկոմը, արտելների կողմից իրենց կանոնադրություններն ընդունելու տեմպերն ընդհանուր առմամբ գտնելով նորմալ, միաժամանակ նշում էր, որ առանձին շրջաններում տեղի ունեն դանդաղկոտության և մյուս կողմից՝ ավելորդ շտապողականության տենդենցներ։ Օրինակ՝ առ 1-ը ապրիլի 1935 թ. 990 կոլտնտեսություններից ընդունել էին իրենց կանոնադրությունները 286 կոլտնտեսություններ, որը պետք է նորմալ համարել։ Սակայն առանձին շրջաններում (Ադրբա, Բասարգեչար, Լենինական) արտելները իրենց կանոնադրությունները դեռևս չէին ընդունել կամ ընդունել էին մեկ-երկու կոլտնտեսություններ։ Ամասիայում ու Վեդիում փորձեր էին արվել գարնանացանի պատճառով հետաձգել կանոնադրությունների ընդունումը, չնայած ՀԿ(բ)Պ Կենտկոմի 1935 թ. մարտի 22-ի և ապրիլի 9-ի որոշումներում պարզ կերպով նշված էր, որ գյուղատնտեսական արտելի կանոնադրության ընդունման կամպանիան պետք է զուգակցվի գարնանացանի աշխատանքները լավագույն կերպով կատարելու համար ծավալված պայքարի հետ։

Մի շարք այլ շրջաններում (Ղամարլու, Ախտա, Արթիկ) ավելորդ շտապողականություն էին հանդես բերում կանոնադրության ընդունման գործում, որի պատճառով այն մակերեսային էր քննարկվում և ընդունվում։ Օրինակ, Արթիկի շրջանի Մոնգոլուլու և Ղամարլուի շրջանի Ներքին Նեջրլու գյուղերում կոլտնտեսային ժողովներում կանոնադրության բոլոր կետերն ընդունվել էին մեխանիկորեն, «միաձայն», առանց որևէ փոփոխությունների ու լրացումների, իսկ Ախտալի շրջանի Յայջի, Արգաքյանդ և Դարաչիչակ գյուղերում կանոնադրության ընդունումը կատարվել է ձևականորեն, նույն այն ժողովում, որտեղ ընդունվում էր կանոնադրությունը, քննարկվել էին նաև այլ հարցեր։

Մի շարք շրջաններում ու կոլտնտեսություններում անբավարար աշխատանք էր տարվել կոլտնտեսականների ներգրավման հարցում և չէր ապահովվել ժողովներին նրանց 2/3-ի մասնակցությունը, իսկ կանանց մասնակ-

[1] ՄԼԻ-ի Հայկ. ֆիլիալի արխիվ, ֆ. 1, 1935, գ. 5, կապ. 2, թ. 2։
[2] «Խորհրդային Հայաստան», 1935, №№ 70, 83, 139, 200։

ցությունը հարցը ավելի վատ էր կազմակերպվել։ Օրինակ, Վեղու շրջանի Շիրազլու գյուղում կանանց միայն կեսն էր մասնակցել ժողովին, իսկ Հոկտեմբերյանի շրջանի Բամբակաշատ գյուղում՝ 315 կանանցից ժողովին մասնակցել էին միայն 15-ը։ Անբավարար նախապատրաստությունը ժողովներին, ինչպես և պետք էր սպասել, հասցնում էր սխալ որոշումներ ընդունելուն։ Այսպես, Ախտալի շրջանի Դիմաշեն և Շահրիզ գյուղերում սխալ էին սահմանել կոլտնտեսականի անհատական տնտեսության մեջ օգտագործվող անասունների քանակի նորմաները։ Նոր-Բայազետի շրջանի Սարուխան և Բաշքյանդ գյուղերի կոլտնտեսություններում որոշել էին կոլտնտեսության անդամ ուսուցիչներին անամերձ չհատկացնել։ Լամբալուի շրջանի Յամանջալուի կոլտնտեսությունում իրենց անասունները վաճառած և նոր կոլտնտեսություն մտած գյուղացիներից գանձվող փոխհատուցումը տարածել էին նաև հին կոլտնտեսականների վրա։ Բնջալուում որոշել էին անբաժան ֆոնդին հատկացնել ոչ թե դրամական, այլ կոլտնտեսության ամբողջ համախառն եկամտի 20 տոկոսը[4] և այլն։

Ոչ օպերատիվ ձևով են գործում նաև առանձին շրջանային Սովետի գործադիր կոմիտեները։ Չնայած ՀԿ(բ)Պ Կենտկոմի ապրիլի 9-ի որոշման մեջ ասված էր, որ շրջգործկոմները պարտավոր են 5 օրվա ընթացքում հաստատել ընդունված կանոնադրությունները, սակայն այդ նույն ժամանակ, ապրիլի 1-ին ընդունված 286 կանոնադրություններից նրանք հաստատել էին միայն 35-ը[5]։

Ելնելով այս բոլորից, ՀԿ(բ)Պ Կենտկոմը և ՀՍՍՌ Ժողկոմսովետը 1935 թ. հունիսի 16-ին ընդունած՝ «Հայաստանի ՍՍՀ-ում կոլտնտեսությունների կողմից գյուղատնտեսական արտելի կանոնադրությունները մշակելու, քննարկելու և ընդունելու ձևերի մասին» և նույն թվականի օգոստոսի 27-ի «Գյուղատնտեսական արտելի օրինակելի կանոնադրության խախտումների մասին» իրենց որոշումներում բոլոր շրջգործկոմներին առաջարկում էին սխալներ պարունակող և ոչ օրինական կարգով ընդունված կանոնադրությունները կրկին վերադարձնել կոլտնտեսային ժողովներում նորից քննության առնելու համար, միաժամանակ նշելով այն չհաստատելու պատճառները։

Ի կատարումն այդ որոշումների ռեսպուբլիկայի բոլոր շրջաններում պայքար ծավալվեց թույլ տրված սխալներն ուղղելու համար։ Օրինակ՝ Թալինի շրջանային Սովետի գործկոմի նախագահությունը իր 1935 թ. ապրիլի 3-4-ի նիստերում քննարկեց շրջանի գյուղերում կանոնադրության մասսայականացման և ընդունման հարցը։ Նախագահության որոշմամբ Արեգի, Հակկոյի, Քալաշրեկի, Սարուշիի և Աղջալայի կոլտնտեսությունների կանոնադրությունները վերադարձվեցին տեղերը և հանձնարարվեց «նորից կազմակերպել կանոնադրությունների ընդունումը հիշյալ կոլխոզներում, ապահովել հասակավոր կոլտնտեսականների մեծամասնության մասնակցությունը»[26]։

Նույն կերպ վարվեցին նաև ռեսպուբլիկայի մյուս շրջանային սովետների գործկոմները։

Սակայն, չնայած այդ պայքարին, որոշ տեղերում թույլ տրված սխալները, որոնք կոլտնտեսականների ու մենատնտեսների արդարացի դժգոհու-

[24] «Խորհրդային Հայաստան», 1935, ապրիլի 10, № 83։
[25] ՄԱԻ-ի Հայկ. ֆիլիալի արխիվ, ֆ. 1, 1935, գ. 849, կապ. 24, թ. 75։
[26] ՀՍՍՌ ՊԿԱ, ֆ. 113, գ. 2883, թ. 3։

թյունն էին առաջացնում, օգտագործվեցին կուլակային տարրերի կողմից հակակոլտնտեսային ագիտացիայի և գյուղատնտեսական արտելի նոր կանոնադրությունը վարկաբեկելու նպատակով։ Ներքին Ախտալում, օրինակ, կուլակի տղա Արամալիս Մուրադյանը իր համագյուղացի, դեռևս մենատնտես Արամ Իսրայանին ասում էր. «Ի՞նչն է մեռել, որ կոլխոզ ես մտնում»։ Կուլակի գործակալ Գևորգ Մարտիրոսյանը մենատնտես Մկրտիչ Դասպարյանին ասում էր. «Ինչո՞ւ ես մտնում կոլխոզ, դրանց ի՞նչն է տեղը մնում, որ կոլխոզը մնա. ինչպես 30 թվին քայքայվեց, այնպես էլ հիմա կքայքայվի։ Կանոնադրության մեջ դիտմամբ լավ բաներ են գրել, որ մտնեն կոլխոզը» և այլն։

Կուլակային ագիտացիան ավելի կատաղի բնույթ ընդունեց այն ժամանակ, երբ հողաշինարարական լայն ծավալով աշխատանքներ սկսվեցին արտելի կանոնադրության հիման վրա հողն առհավետ ու անվճար կոլտնտեսություններին հանձնելու և այդ առթիվ նրանց պետական ակտեր տալու համար։

Կուլակության մնացորդներն ու նրանց գործակալներն ամեն կերպ ձգտում էին քայքայել կոլխոզային հողօգտագործման հիմքերը, գյուղացիության աչքում իջեցնել արտելի կանոնադրության նշանակությունը, նրանց մեջ դժգոհություն առաջացնել Սովետական պետության հանդեպ։

Դասակարգային թշնամու ջրադացին ջուր էին լցնում նաև տեղերում թույլ տրված սխալներն ու ֆետարարական տարրերի ծավալած քայքայիչ աշխատանքը։ Վերջիններս արտահայտվում էին այն բանում, որ, ինչպես ցույց է տվել ռեսպուբլիկայի 17 շրջաններում տրված 463 պետական ակտերի ստուգման մասին նյութերը, բազմաթիվ դեպքերում (արձանագրվել է 107 այդպիսի դեպք—Ա. Դ.) միևնույն հողամասն ամրացվել է տարբեր կոլտնտեսությունների, անգամ՝ տարբեր ազգություններ ու ռեսպուբլիկաների կոլտնտեսությունների. շատ անգամ մենատնտեսների հողը տրվել է կոլտնտեսություններին, շերտամիջություն է թույլ տրվել վերջիններիս հողամասերը սահմանելիս (75 դեպք)։ Սահմանամերձ շրջաններում (Հոկտեմբերյան, Ամասիա, Վեդի) փորձեր են արվել մենատնտեսներին զրկելու հողօգտագործման իրավունքից, իսկ մի շարք այլ շրջաններում՝ (Էջմիածին, Լամարլու և այլն) նույնպիսի փորձեր են կատարվել ազգային փոքրամասնությունների նկատմամբ։ 233 կոլտնտեսություններում պետական ակտերը սխալ են ձևակերպել և այլն[28]։

1936 թ. վերջերին և 1937 թ. սկզբներին ՍՍՌՄ Հողժողկոմատի հանձնաժողովը, ստուգելով կոլտնտեսային շինարարության հարցերը, ռեսպուբլիկայի մի շարք կոլտնտեսություններում գյուղատնտեսական արտելի կանոնադրության և պարտիայի ու Սովետական կառավարության որոշումների խախտման նոր փաստեր հայտնաբերեց։ Առանձնապես մեծ թիվ էին կազմում կոլտնտեսային դեմոկրատիայի խախտման, կոլտնտեսականների կանոնադրական իրավունքների անտեսման, վերատուդիչ հանձնաժողովների թույլ աշխատանքի հետևանքով տեղ գտած ֆինանսական կարգապահության խախտումների ու կոլտնտեսականների աշխատանքի սխալ հաշվառման դեպքերը[29]։

---

[28] «Խորհրդային Հայաստան», 1935 , ապրիլի 21։

[29] ՀՍՍՌ ՊԿԱ, ֆ. 40 113, գ. 2440,, 1 7, 19, ֆ. 113, գ. 2553, թ. 6, գ. 2576, թ. 1։

[29] ՄԼԻ-ի Հայկ. ֆիլիալի արխիվ, ֆ. 1, 1936—37, գ. 258, կապ. 28, թ. 51։

Այդ սուղումը, ինչպես ռեսպուբլիկայի Հողժողկոմատին, նույնպես և ՀԿ(բ)Պ շրջկոմներին օգնեց վեր հանելու կոլտնտեսային շինարարության ընթացքում տեղ գտած թերությունները ու սխալները և միջոցներ ձեռնարկելու դրանք արագորեն վերացնելու ուղղությամբ։

Սակայն, պետք է ասել, որ կոլտնտեսային շինարարության ընթացքում թույլ տրված սխալների բացահայտումն ու ուղղումը, որը ուրախացնում էր բոլոր ազնիվ կոլտնտեսականներին, դուր չէր գալիս ռեսպուբլիկայի որոշ ղեկավար աշխատողների (Ամատունի, Ակոպով և ուրիշներ)։ Վերջիններս դեմ էին սուղման արդյունքների մեջ կոլտնտեսություններում տեղ գտած չարաշահումների և, հատկապես, արտելի կանոնադրության խախտումների մասին փաստերն արձանագրելուն։ Դեռ ավելին, ՀԿ(բ)Պ Կենտկոմի այն ժամանակվա առաջին քարտուղար Հ. Ամատունին այդ հարցի քննարկումը կոպիտ կերպով հանեց Կենտկոմի բյուրոյի օրակարգից։

Այս բոլորը ՍՍՌՄ Հողժողկոմատի հանձնաժողովին ստիպեցին վերադառնալ Մոսկվա և այդ մասին զեկուցել ՍՍՌՄ կառավարությանը[30]։

Հակասովետական տարրերի, կուլակության մնացորդների ու նրանց գործակալների փճաբարարական գործողությունները, ինչպես և գյուղատնտեսության ղեկավարման ընթացքում թույլ տրված սխալները զգալի փճաներ հասցրին կոլտնտեսային շինարարության զարգացման ու կոլտնտեսությունների հետագա կազմակերպական-տնտեսական ամրապնդման գործին, սակայն նրանք չկարողացան կանգնեցնել հայկական գյուղի զարգացումը դեպի սոցիալիզմ։

Հայաստանի պարտիական կազմակերպությունները, համախմբված պարտիայի և Սովետական կառավարության շուրջը, կոլտնտեսային գյուղացիության ամենալայն աջակցությամբ կարողացան հաջողությամբ լուծել գյուղատնտեսական արտելի օրինակելի կանոնադրության պահանջների համեմատ կոլտնտեսականների անձնական շահը համակոլտնտեսային ու պետական շահերին զուգակցելու և այդ հիման վրա կոլտնտեսային կարգերն էլ ավելի ամրապնդելու խնդիրը։

Այդ պայքարի շնորհիվ արդեն 1937 թ. վերջերին ռեսպուբլիկայի կոլտնտեսությունների 79,1%-ում տնամերձ հողամասերը տրված էր կանոնադրությամբ սահմանված նորմաներին համապատասխան[31]։ Իսկ պետության օգնությունը կոլտնտեսականներին անասուններ ձեռք բերելու գործում և նրանց անձնական օգտագործման տակ գտնվող անասունների քանակի կանոնադրությամբ սահմանված նորմաների պահպանման համար մղված պայքարը հասցրեց այն բանին, որ կոլտնտեսականների ապահովվածությունն անասուններով կարճ ժամանակամիջոցում զգալիորեն ավելացավ[32]։

Կատարվեց հայ գյուղացու դարավոր երազանքը՝ ունենալ իր հողը։ Ռեսպուբլիկայի աշխատավորները Հայաստանում սովետական կարգերի հաստատման 15-րդ տարեդարձի առթիվ պարտիայի Կենտկոմին և Սովետական կառավարությանը ներկայացրած իրենց զեկուցագրի մեջ նկարագրելով իրենց դառն անցյալը, գրում էին. «Մենք գյուղում դարեր շարունակ հող էինք երա-

[30] Տե՛ս նույն տեղում։

[31] „Колхозы во второй сталинской пятилетке", стат. сборник, Госпланиздат, М. 1939, Л. стр. 12.

[32] Տե՛ս նույն տեղում, էջ 106։

զում և ապրում էինք աչքներս կարիքին։ Մենք պապենական արորով ու մանգաղով՝ շահագործողների և բնության լիակատար գերին էինք և կսկիծը սրտներումս տեսնում էինք, թե ինչպես նրանք տանում էին մեր հալալ քրտնքի պտուղները»[33]։

Եվ, իրոք, Հայաստանի վարելահողերի զգալի մասը գտնվում էր վանքերի հոգևոր և աշխարհիկ ֆեոդալների ձեռքին։ Նրանց էին պատկանում հատկապես ամենաեկամտաբեր ջրովի հողերը։ Ալավերդու շրջանում հոգևոր և աշխարհիկ ֆեոդալների ձեռքին էր գտնվում մշակվող բոլոր հողերի 41 տոկոսը, Աշտարակի շրջանում՝ 35 տոկոսը, Էջմիածնում՝ 30 տոկոսը, Վեդիում՝ 28 տոկոսը, Կոտայքում՝ 21 տոկոսը[34] և այլն։

Հոկտեմբերյան ռևոլյուցիան և սովետական կարգերի հաստատումը Հայաստանում իսպառ վերացրին կալվածատիրական հողատիրությունը, հողը դարձրին պետական-համաժողովրդական սեփականություն, որը հանձնվեց Հայաստանի կոլտնտեսային գյուղացիությանը անվճար և առհավետ օգտագործման։

ՍՍՌՄ Պետպլանի ժողովրդական տնտեսության հաշվառման կենտրոնական վարչության տվյալներով, Հայաստանի կոլտնտեսային գյուղացիությունը Սովետական պետությունից ստացել և 1937 թ. վերջերին փաստորեն օգտագործում էր մեկ միլիոն 399 հազար հեկտար հող[35]։

Նոր օրինակելի կանոնադրության քննարկումն ու նրա հիման վրա յուրաքանչյուր գյուղատնտեսական արտելի կանոնադրության մշակումը կարևորագույն դեր խաղացին կոլտնտեսությունների աշխատանքներում։ Կանոնադրության քննարկման ընթացքում կոլտնտեսականների արած քննադատական դիտողությունները, սխալների վերհանումը և ուղղումը տվեցին իրենց դրական արդյունքները։ Բարձրացավ աշխատանքային կարգապահությունը, բարելավվեց գյուղատնտեսական աշխատանքների որակը, կոլտնտեսային դեմոկրատիան իր հետագա զարգացումը ստացավ, կոլտնտեսական լայն մասսաներն սկսեցին ավելի ակտիվորեն մասնակցել արտադրության կարևորագույն խնդիրների լուծմանը։ Այդ հիման վրա կոլտնտեսություններն ամրապնդվեցին և հզոր ուժ դարձան։

Գյուղատնտեսական արտելի կանոնադրության քննարկման և ընդունելու գործում կոլտնտեսականների ակտիվ մասնակցությունը սոցիալիզմի օրոք ժողովրդական մասսաների ստեղծագործական դերի վառ օրինակներից մեկն է։

* * *

1935 թ. կանոնադրությունը, սահմանելով տնտեսության կոոպերատիվ-կոլտնտեսային ձևի սոցիալիստական սկզբունքները, տնտեսությունը պլանային կերպով վարելու հիմունքները, կոլտնտեսային աշխատանքի կազմակերպման սիստեմը և արտադրությունը ղեկավարելու դեմոկրատական կարգը, գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման համար մղված պայքարի մի ամբողջ էպոխա կազմեց և մեծապես նպաստեց մեր երկրում կոլտնտեսային կարգերի վերջնական ամրապնդմանը։

---

[33] «Խորհրդային Հայաստան», 1935, նոյեմբերի 28, № 274։
[34] ՀՍՍՌ ՊԿԱ. ֆ. 113, գ. 2515, (1930), թ. 14։
[35] „Колхозы во второй сталинской пятилетке", стр. 10

Սակայն Կոմունիստական պարտիան ու Սովետական կառավարությունը 1935 թ. ընդունված գյուղատնտեսական արտելի կանոնադրությունը մեկընդմիշտ սահմանված, քարացած դոգմա չդարձրին։

Կոլտնտեսային շինարարության հետագա տարիների փորձը ցույց տվեց, որ անհրաժեշտ է կանոնադրության մի շարք դրույթները ճշգրտել, վերանայել և զարգացնել։

Հետպատերազմյան շրջանում, կոլտնտեսությունների նոր փորձի ընդհանրացման հիման վրա՝ կոլտնտեսային ամենալայն մասսաների ակտիվ աջակցությամբ պարտիան ընդունեց մի շարք որոշումներ ու միջոցառումներ՝ ուղղված կոլտնտեսային կյանքում կոլտնտեսական լայն մասսաների ակտիվ մասնակցության ապահովմանը, արտադրությունը կազմակերպելու գործում կոլտնտեսությունների ու կոլտնտեսականների նախաձեռնության ու ինքնագործունեության զարգացնելուն, արտադրության է՛լ ավելի կատարելագործմանն ու կոլտնտեսային կարգերի հետագա ամրապնդմանը։

ՍՄԿՊ Կենտկոմը և ՍՍՌՄ Մինիստրների Սովետը 1956 թ. մարտի 6-ին որոշում ընդունեցին «Գյուղատնտեսական արտելի կանոնադրության և կոլտնտեսային արտադրության կազմակերպման ու արտելի գործերի կառավարման ասպարեզում կոլտնտեսականների նախաձեռնության հետագա զարգացման մասին»։ Այդ որոշումը, ելնելով գյուղատնտեսական արտելի կանոնադրության ընդունումից անցած քսան տարվա ընթացքում կոլտնտեսությունների ձեռք բերած փորձից, ցույց է տալիս, որ այդ ժամանակից ի վեր կոլտնտեսություններն աճել ու թևակոխել են իրենց զարգացման նոր, ավելի բարձր աստիճանը։ Զարգացման ներկա էտապում արտելի կանոնադրության որոշ դրույթներ ոչ միայն չեն օգնում, այլև խանգարում են արտելային տնտեսության զարգացմանը։

Ելնելով այդ բոլորից, որոշումը թույլ է տալիս կոլտնտեսությունների հանրային տնտեսության զարգացման շահերը նկատի ունենալով, համապատասխան փոփոխություններ մտցնել արտելի կանոնադրության մեջ։

1958 թ. փետրվարին պարտիայի Կենտկոմի Պլենումը պատմական մեծ նշանակություն ունեցող որոշում ընդունեց «Կոլտնտեսային կարգի հետագա զարգացման և մեքենա-տրակտորային կայանները վերակազմելու մասին»։ Պլենումի մշակած միջոցառումները համաժողովրդական քննարկման դրվեցին և ջերմ պաշտպանություն ու հավանություն գտան սովետական բոլոր մարդկանց կողմից։ Արտահայտելով նրանց կամքը, ՍՍՌՄ Գերագույն Սովետը գյուղատնտեսության բնագավառում պարտիայի միջոցառումներին օրենքի ուժ տվեց.

«Գյուղատնտեսության կոլեկտիվացումից հետո, որն իրականացվեց Լենինյան հանճարեղ կոոպերատիվ պլանի հիման վրա, պարտիայի և կառավարության այդ միջոցառումների կենսագործումը նոր, բացառիկ կարևոր ու խոշոր քայլ կհանդիսանա կոլտնտեսային արտադրության զարգացման գործում»[36]։

Այսպիսով, կոլտնտեսային շինարարությունը և կոլտնտեսային կարգերի հետագա ամրապնդումը մեր երկրում եղել է և այժմ էլ հանդիսանում կոլ-

[36] „Партия—организатор крутого подъема сельского хозяйства СССР", сборник документов (1953—1958). Госполитиздат, М., 1958, стр. 3.

անտեսային մասսաների ստեղծագործական աշխատանքային պրակտիկայի և պարտիայի կողմից այդ առաջավոր փորձն ընդհանրացնելու, կոլտնտեսային պրակտիկայի ճանապարհը գիտական ընդհանրացման ու կանխատեսության լուսով լուսավորելու միասնական մի պրոցես: Լենդ որում պարտիան իր գործունեության մեջ ելնում է լենինյան այն ցուցումից, որ, «Միայն կոլեկտիվ փորձը, միայն միլիոնների փորձը կարող է այս դեպքում տալ վճռական ցուցումներ...»[37]:

---

[37] Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 27, էջ 510: